

## Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի գործունեությունը 1990-1991 թթ.

ՀՏԴ 941 (479.25)

**Չարարյան Լիլիթ Ս.**

*ավագ գիտաշխատող, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ),  
lilit\_zakaryan@mail.ru*

**Հանգուցաբառեր.** Գերագույն խորհուրդ, խորհրդարան, օրենսդիր իշխանություն, ներկայացուցչական իշխանություն, անկախություն, սուվերենություն, հանրաքվե, Սահմանադրական հանձնաժողով, պատգամավոր

### Деятельность Верховного совета Республики Армения в 1990-1991 гг.

**Закарян Лилит С.**

*старший научный сотрудник, к.и.н., Институт истории НАН РА, (Ереван, РА)  
lilit\_zakaryan@mail.ru*

**Аннотация:** Статья посвящена деятельности Верховного Совета Армении в 1990-1991 гг. Арцахское движение 1988 г. подняло мощную демократизирующую волну, благодаря которой политическая система Армении претерпела серьезные качественные преобразования. Начали формироваться политические институты независимого государства, произошли изменения в общественном сознании, создавались и внедрялись новые политические технологии. Изменения произошли и в деятельности важнейшего института политической системы - парламента республики. Статья посвящена событиям первого года деятельности Верховного Совета Республики Армения. Именно в это время Верховному Совету выпала честь принять Декларацию независимости, заложить законодательные основы независимого государства. Так как Верховный Совет не только был высшим органом законодательной власти, но и представительной, то изменения произошли также в принципах и формах работы с избирателями. Работа Верховного Совета в этот период была наиболее прозрачной и открытой. На Верховный Совет в этот период была возложена также и функция контроля над органами местной власти.

Работа Верховного Совета развертывалась в сложных внешнеполитических условиях, когда Республика Армения сталкивалась с нарастающей агрессией азербайджанской стороны и органов центральной власти, приближающемся к распаду СССР.

**Ключевые слова:** Верховный Совет, парламент, законодательная власть, представительная власть, независимость, суверенитет, референдум, Конституционная комиссия, депутат.

### Activities of the Supreme Council of the Republic of Armenia in 1990-1991

**Zakaryan Lilit S.**

*Senior Researcher, Candidate of Historical Sciences, Institute of History of NAS RA (Yerevan, RA)  
lilit\_zakaryan@mail.ru*

**Abstract:** The article refers to the activities of the Supreme Council of Armenia in 1990-1991. The Artsakh movement in 1988 raised a powerful democratizing wave, due to which the political system of Armenia underwent serious qualitative transformations. Political institutions of an independent state began to form, changes took place in public consciousness, new political technologies were created and introduced. Changes have also happened in the activities of the most important institution of the political system - the parliament of the republic. The article is devoted to the events of the first year of the activity of the Supreme Council of the Republic of Armenia. It was at this time that the Supreme Council had the honor to adopt the Declaration of Independence, to lay the legislative foundations of an independent state. As the Supreme Soviet was not only the highest legislative body, but also a representative one, changes also took place in the principles and forms of work with voters.

During this period, the work of the Supreme Soviet was the most transparent and open and the function of control over local authorities laid on it. The work of the Supreme Soviet developed in difficult foreign policy conditions, when the Republic of Armenia faced the growing aggression of the Azerbaijan side and the central authorities, which was approaching the collapse of the USSR.

**Keywords:** Supreme Soviet, parliament, legislative power, representative power, independence, sovereignty, referendum, Constitutional Commission, deputy.

Անկախության հռչակումից հետո Հայաստանի քաղաքական համակարգը սկսեց որակական լուրջ փոխակերպումների ենթարկ-

վել. ձևավորվեցին անկախ պետության քաղաքական ինստիտուտները, փոփոխություններ եղան հասարակական գիտակցության մեջ,

ստեղծվեցին և ներդրվեցին քաղաքական նոր տեխնոլոգիաներ: Փոփոխություններ եղան նաև քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտի՝ հանրապետության խորհրդարանի գործունեության մեջ:

1990 թ. սկզբին պարզ էր, որ Հայաստանը գնալու է անկախացման ճանապարհով: 1990թ. ապրիլի կեսերին իշխանության համար պայքարը բացահայտ դարձավ: Հայաստանի ԽՍՀՄ-ից անկախացման ընթացքի որոշակի փուլում փողոցային պայքարը տեղափոխվեց խորհրդարան, որը կարևոր դեր խաղաց անկախ պետության կայացման գործում: ԽՍՀՄ-ից անկախացող խորհրդարանը սկսեց իր գործունեությունը որպես ՀԽՍՀ տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդ, ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդ (Անկախության հռչակագրի ընդունումից հետո) և այնուհետև՝ 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո, վերածվեց Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի:

Գերագույն խորհուրդը, որին բախտ էր վիճակված ընդունել հանրապետության համար դարակազմիկ որոշումներ, ձևավորվեց 1990 թ. մեծամասնական ընտրական համակարգով, 2 փուլով՝ մայիսի 20-ին և հունիսի 3-ին անցկացված ընտրություններով: Ընտրվեց 260 պատգամավոր: Գերագույն խորհուրդն իր աշխատանքը սկսեց 1990 թ. հուլիսի 20-ին և շարունակեց մինչև 1995 թ. մայիսի 15-ը: Ճիշտ է՝ խորհրդարանը չփոխեց իր անվանումը, քանի որ դա հնարավոր էր միայն ՀՀ Սահմանադրության ընդունման դեպքում, սակայն մեծ փոփոխություններ եղան աշխատանքի բովանդակության մեջ և ընթացակարգերում: Փոփոխություններ արվեցին Խորհրդային Հայաստանի որոշ օրենսգրքերում, հարմարեցնելով դրանք անկախացող հանրապետության կարիքներին: Ընդունվեց 185 նոր օրենք և 1169 որոշում [3]: Էականորեն փոփոխվեց օրենքների ընդունման ընթացակարգը, քանի որ, ի տարբերություն Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի, նորում ներկայացված էին մի շարք խմբավորումներ, որոնք գաղափարախոսական առումով մեծ տարբերություններ ունեին:

Գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքում խորհրդարան մտավ Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ), նրան ընդդիմադիր ուժ հանդիսացող Հայոց համագային շարժումը (ՀՀԾ), որը ստացավ քվեների 45% [2, էջ 371], մի քանի անկախ պատգամավորներ: Կուսակցական հիմունքներով ընդունվեց նաև ԱԻՄ-ի ներկայացուցիչ՝ Պարույր Հայրիկյանը [2, էջ 371]: Իշխանության համար պայքարում ընդգրկված էր մտավորականության մի մասը, խորհրդային քաղաքական ռեժիմի այլախոհները, հին և նոր կուսակցական

Էլիտայի ներսում ձևավորված ընդդիմությունը, տնտեսական Էլիտայի շուկայամետ ներկայացուցիչները, իշխանական և կառավարական ամենատարբեր կառույցների ներկայացուցիչները: Չձևավորված ժողովրդավարական մշակույթի պայմաններում ընդդիմության կողմից կիրառվում էին նաև պայքարի ոչ լեգիտիմ մեթոդներ, ընթացակարգեր և պրակտիկաներ: Բռնություն կիրառվեց հանրապետության որոշ ղեկավարների նկատմամբ (ծեծի ենթարկվեց ՀԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը), հարձակումներ եղան կառավարական շենքերի վրա, վիրավորական արտահայտություններ էին հնչում Ամենայն հայոց կաթողիկոսի և այն մտավորականների հասցեին, ուլքեր, վախենալով հանրապետության ճակատագրի համար, գտնում էին, որ Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքի պայմաններում ԽՍՀՄ-ի կազմում մնալն այլընտրանք չունի: Սակայն, քանի որ հասարակական կարծիքը ՀՀԾ-ի կողմն էր, ընտրությունները համարվեցին ժողովրդավարական, բացի այդ խորհրդային ընտրությունների համեմատությամբ դրանք իրոք առաջընթաց էին:

Նորընտիր Գերագույն խորհրդում գերակշիռ դեր ունեին 2 քաղաքական ուժեր՝ ՀԿԿ-ն և ՀՀԾ-ն: Ծուռով խորհրդարանում ձևավորվեցին խորհրդարանական խմբակցություններ և պատգամավորական խմբեր<sup>1</sup>: Գերագույն խորհրդում պայքար սկսվեց ԳԽ նախագահի պաշտոնի համար: Առաջարկվեցին մի քանի թեկնածուներ, սակայն հիմնական պայքարը ծավալվեց երկու թեկնածուների միջև՝ ՀԿԿ ներկայացուցիչ Վլադիմիր Մովսիսյանի և ՀՀԾ ներկայացուցիչ Լևոն Տեր-Պետրոսյանի: Թեկնածուներից յուրաքանչյուրը ներկայացրեց Հայաստանի սպազայի իր տեսլականը, իր ծրագիրը: Վ.Մովսիսյանը սուվերեն Հայաստանի սպազան տեսնում էր ԽՍՀՄ կազմում, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը ներկայացնում էր Հայաստանի անկախացման ծրագիրը՝ ԽՍՀՄ-ից դուրս: 1990 թ. օգոստոսի 4-ին, ԳԽ-ում լարված պայքարից հետո, ՀԽՍՀ ԳԽ նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

<sup>1</sup> «Հայոց համագային շարժում» (ՀՀԾ) խմբակցություն (56 պատգամավոր), «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» (ՀԿԿ) խմբակցություն (25 պատգամավոր), «Հանրապետություն» պատգամավորական խումբ (36 պատգամավոր), «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ) պատգամավորական խումբ (36 պատգամավոր), «Արցախ» պատգամավորական խումբ (12 պատգամավոր), «Ազգային ժողովրդավարներ» պատգամավորական խումբ (11 պատգամավոր), «Ազատ խորհրդարանականներ» պատգամավորական խումբ (11 պատգամավոր), «Ազգային առաջադիմություն» պատգամավորական խումբ (10 պատգամավոր), «Լիբերալ-դեմոկրատներ» պատգամավորական խումբ (10 պատգամավոր):

ՀԽՍՀ ԳԽ առաջին նիստի բացմանը՝ 1990 թ. հուլիսի 20-ին, ներկա էին 175 ՀԽՍՀ ժողովրդական պատգամավորներ: Նիստը վարում էր Ընտրությունների կենտրոնական հանձնաժողովի (ԿԸՀ) նախագահ Ռ. Պ. Ամիրջյանը: Առաջին նիստին հրավիրված էին ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի անդամներ, ՀԽՍՀ 11-րդ գումարման ԳԽ նախագահության անդամներ, ժողովրդական պատգամավորներ, ԿԸՀ անդամներ, ՉԼՍ և սփյուռքի ներկայացուցիչներ: 1988 թ. Արցախյան շարժումը ժողովրդավարական մեծ ալիք էր բարձրացրել, թափանցիկ գործելավորձ և հրապարակայնություն թելադրելով անկախացող հանրապետության խորհրդարանին, նիստը հեռարձակվում էր ուղիղ եթերով:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման սկսվելուց իվեր կային բազմաթիվ զոհեր, ուստի դեպուտատներից մեկի՝ Գ. Բաղդասարյանի առաջարկով 1 րոպե լռությամբ ներկաները հարգեցին ազգային-ազատագրական շարժման 2 տարիների ընթացքում զոհվածների հիշատակը: Նորընտիր Գերագույն Խորհրդի օրհնության և ողջույնի խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը:

Չայների մեծամասնությամբ առաջին նիստին որոշում ընդունվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճի էլեկտրոնային համակարգի մասին: Ստեղծվեց էլեկտրոնային համակարգի աշխատանքը հսկող խումբ: Որոշում ընդունվեց ՀԽՍՀ ԳԽ քարտուղարություն ընտրելու մասին: ՀԽՍՀ ԳԽ քարտուղարության ղեկավար հաստատվեց Արա Մահակյանը:

Ընտրվեցին ՀԽՍՀ ԳԽ մանդատային հանձնաժողովի 11 անդամները, համանախագահներ Ա. Գամգյանն ու Ա. Ոսկանյանը: Մանդատային հանձնաժողովը սկսեց ժողովրդական պատգամավորների լիազորությունների ճանաչման գործընթացը:

Գերագույն խորհրդի աշխատանքը ծավալվում էր ներքին և արտաքին քաղաքական բարդ իրավիճակում: Քաղաքական անցուղարձին հետևելու համար 1990 թ. հուլիսի 26-ին ստեղծվեց հանրապետության վիճակի օպերատիվ վերահսկման ժամանակավոր հանձնաժողովը, օգոստոսի 6-ին՝ ազգային անվտանգության կոնցեպցիան մշակող հանձնաժողովը: Բարդ վիճակ էր ստեղծվել նաև երկրի ներսում, օգտվելով խորհրդային իշխանության թուլացումից և նոր իշխանությունների անփորձությունից ակտիվանում էին քրեական տարրերը: ՀՀ ԳԽ նախագահության հրամանագրի 1990 թ. հոկտեմբերի 18-ի որոշմամբ թույլատրվեց գեներկրել ՀՀ ԳԽ նախագահության անդամներին, ՀՀ ԳԽ պաշտպանության և ներքին գործերի

հարցերի հանձնաժողովի անդամներին [1, գ. 1, էջ 42]:

Անկախացող Հայաստանը դեռևս գտնվում էր ԽՍՀՄ կազմում, բայց արդեն հակադրվում էր խորհրդային կենտրոնական իշխանությունների որոշումներին: Հակադրման քայլերից էր 1990 թ. հուլիսի 30-ի ՀԽՍՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով ԽՍՀՄ-ից արտաքսված Պ. Հայրիկյանի պատգամավորական լիազորությունների ճանաչումը և նրան Հայաստան վերադարձնելու գործընթացի ծավալումը: ՀՀ ԳԽ 1990 թ. դեկտեմբերի 10-ի որոշման համաձայն «Մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը դադարեցվում էր գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին» [1, գ. 20, էջ 144]: Ստեղծվեց հանձնաժողով ՊԱԿ-ի գործունեություն ուսումնասիրելու համար (հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մանուչարյան):

1990 թ. օգոստոսի 6-ին ստեղծվեց Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովը: Սկսվեց ԳԽ մշտական հանձնաժողովների ձևավորման գործընթաց, որոնց նախագահները, Գերագույն խորհրդի գործունեության ընթացքում պարտադիր հաշվետվություններ էին ներկայացնում հանձնաժողովների կողմից կատարված աշխատանքների մասին: Հաշվետվությունները լուրջ քննարկվում և գնահատվում էին ԳԽ-ի կողմից: 1990 թ. օգոստոսի 11-ի նիստում հաստատվեց ՀԽՍՀ ԳԽ ժամանակավոր կանոնակարգը:

Խորհրդարանում քննարկման ներկայացվեց անկախության հռչակագրի 5 նախագիծ, որոնցից յուրաքանչյուրը մանրամասն քննարկման ենթարկվեց: Մուր պայքար ծավալվեց ոչ միայն հռչակագրի բովանդակության, այլ նաև անվան շուրջ: 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունվեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որն արդեն պաշտոնապես ազդարարեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Թեպետ Անկախության հռչակագիրն ընդունվել էր, սակայն օգոստոսի 24-ին շարունակվեց դրա կետերի փոփոխությունների և լրացումների քննարկումը, որից հետո քվեարկության դրվեց Հռչակագրի վերջնական բնագիրն ընդունելու հարցը [1, գ. 15, էջ 156]: Նույն օրը օրենք ընդունվեց «Հայկական ԽՍՀ-ի վերանվանման մասին», որի համաձայն հիմնվելով «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի 1-ին հոդվածի վրա, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշեց.

1. Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան:

2. Ներկայիս գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ:

3. Սույն օրենքը կիրարկել ընդունման պահից [1, գ. 15, էջ 157]:

ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն, երկար քննարկումներից հետո հաստատվեցին հանրապետության նոր խորհրդանիշները: Անկախության հռչակման պահին որևէ մեկը չէր կարող կանխագուշակել, որ ԽՍՀՄ կփլուզվի այդքան շուտ և այդ պատճառով նախատեսվում էր ԽՍՀՄ-ից դուրս գալ խորհրդային օրենսդրության համաձայն 5 տարվա ընթացքում<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի նստաշրջանը հաստատեց առաջիկա ամիսների անկախացող հանրապետության խորհրդարանի օրակարգը: Նախատեսվում էր քննարկել և ընդունել հետևյալ օրենքները՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության մասին», «Զինապարտության և զինվորական ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության պատգամավորի հետևանքման կարգի մասին», «Մահմանադրական հանձնաժողով կազմելու մասին», «Իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացման մասին», «Գերագույն խորհրդի ապարատի մասին», «Ռեպրեսիաների ենթարկվածների իրավունքների վերականգնման մասին», «Սեփականության մասին», «Տեղական խորհուրդների մասին», «Լեզվի մասին», «Քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և միավորումների մասին», «ՀՀ վարչատարածքային ռեֆորմի մասին», «Խղճի ազատության մասին», «Ազգային փոքրամասնությունների մասին», «Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների մասին», «Մայրության և մանկության պաշտպանության և բազմազավակության խրախուսման մասին», «Հանրաքվեի մասին», «Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման մասին» [1, գ. 1, էջեր 58-62, 122]: Այսինքն օրենսդրական փոփոխություններ էին իրականացվելու հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում:

1990 թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ Գերագույն խորհուրդը հայտարարություն ընդունեց, որում

նկարագրվում էր Բաքվի ջարդերից հետո հայաստաց քայլերի շարանը, որոնք արվել էին Ադրբեջանական ԽՍՀ և Խորհրդային իշխանությունների կողմից՝ Լեռնային Ղարաբաղում կազմալուծվեցին տեղական ինքնակառավարման մարմինները, բռնազավթվեցին ՉԼՄ-ները և կապի միջոցները, Լեռնային Ղարաբաղում ստեղծվեց ռազմական դիկտատուրա, որը վերածվեց հայ բնակչության տարրական իրավունքների ոտնահարման և հայրենիքից արտահանման գործիքի: 1990 թ. մարտին խորհրդային բանակի և ներքին զորքերի ակտիվ աջակցությամբ բռնի տեղահանման ենթարկվեց Խանլարի շրջանի հայաբնակ Ազատ և Կամո գյուղերի բնակչությունը, այնուհետև պատժիչ գործողություններ իրականացվեցին հայաբնակ Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում: Հայաստանը և Ադրբեջանը հայտնվեցին պատերազմական իրավիճակի սահմանագծին: Փակվել էր Ադրբեջանի տարածքով անցնող Սարատով-Երևան գազամուղը, շրջափակվախ էր Ղազախ-Իջևան երկաթուղին [1, գ. 16, էջեր 120-121]: Գերագույն խորհրդի այդպիսի հայտարարությունները խիստ կարևոր և նորգործուն դեր էին ունենում հայ հասարակական կարծիքը փոփոխելու, ԽՍՀՄ-ում անվտանգության ապահովման երաշխիքը կասկածի տակ դնելու տեսանկյունից, կողմնորոշելով անկախության օգտին քվեարկելուն: Հայաստանում փախստականների քանակն օրեցօր ավելանում էր և 1990 թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ ԳԽ-ի որոշմամբ ՀՀ Մինիստրների խորհրդին հանձնարարվեց կազմել բռնազաղթացների հարցերով զբաղվող մարմին:

Թեպետ իշխանության էր եկել Հայոց համազգային շարժումը, սակայն կոմունիստական էլիտան որոշ տեղերում դեռ պահում էր իր ազդեցությունը, ուստի 1990 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ԳԽ որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պետական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու մասին»:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդը գործում էր արտաքին քաղաքական լուրջ մարտահրավերների պայմաններում, երբ կործանվող Խորհրդային պետությունը, ամեն կերպ փորձում էր խոչընդոտել միութենական հանրապետությունների անկախացմանը: Տարբեր միջոցներով ճնշում էր գործադրվում նոր միութենական պայմանագիր կնքելու համար: 1991 թ., ՀՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց, որի համաձայն ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը չպետք է մասնակցեր հարցը քննարկող Նովո Օգարյովի նիստին: ՀՀ ԳԽ նախագահության

<sup>2</sup> Խորհրդային հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալը նախատեսված էր ԽՍՀՄ Մահմանադրությամբ, սակայն անկախացման գործընթացի մեխանիզմներ չկային: Միայն 1990 թ. ապրիլի 3-ին ընդունվեց ԽՍՀՄ օրենքը «Միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից անջատվելու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» [4]:

կողմից 1991 թ. մայիսի 31-ին ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին հատուկ հեռագիր ուղղվեց, որտեղ գրված էր, որ վերջին դեպքերը խիստ լարել են իրադրությունը տարածաշրջանում: «Փաստորեն որևէ ներգործուն միջոց չի ձեռնարկվում Գետաշենի, Մարտունաշենի, Բերձորի և ԼՂԻՄ-ի Հաղարթի շրջանի գյուղերի ս.թ. մայիսին տեղահանված հայ բնակչությանը իր մշտական բնակության վայրերը վերադարձնելու համար, չեն ազատված հարյուրավոր պատանդները: Ավելին, 5 կիլոմետրանոց գոտու առկայության պայմաններում Ադրբեջանի տարածքից այսօր էլ պարբերաբար հրետակոծվում են Հայաստանի Հանրապետության գյուղերը, Հայաստանի տարածք են թափանցում զինված ավազակախմբեր, որոնք սահբեկում են խաղաղ բնակչությանը, շարունակելով բազմապատկել սպանվածների և վիրավորների թիվը» [1, գ. 3, էջ 150]: Հենվելով բերված փաստերի վրա, Գերագույն խորհուրդը աննպատակահարմար էր համարում միութենական պայմանագրի նորացումը:

1991 թ. մարտի 1-ին ՀՀ ԳԽ-ն, որոշում կայացրեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին անկախության հանրաքվե անցկացնել: Գիտակցելով հանրաքվեի և հանրապետության նախագահի ընտրության ընթացքում ժողովրդավարության և մարդկանց կամքի ազատ արտահայտման համար պայմանների ապահովման կարևորությունը, Գերագույն խորհուրդը որոշեց 1991 թ. օգոստոսի 16-ից հանրապետության ողջ տարածքում վերացնել արտակարգ դրությունը և պարետային ժամը՝ մտցված ԳԽ 1990 թ. օգոստոսի 29-ի որոշմամբ:

1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեի պրոպագանդման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծրագիրը մշակող հանձնախումբ կազմվեց՝ Խոսրով Հարությունյանի գլխավորությամբ: Գերագույն խորհուրդը Հայաստանի ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվեի նախապատրաստման և անցկացման մասին ֆիլմ պատվիրվեց, հաստատվեց հանրաքվեի խորհրդանիշը (հեղինակներ՝ Ռ. Արուտչյան, Կ. Փաշայան) [1, գ. 4, էջ 105]: Անկախության հանրաքվեի մասնակցությունը աննախադեպ բարձր էր՝ մասնակցեց քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 95,05%: Նրանցից 94,39% քվեարկեց անկախության օգտին: 1991 թ. սեպտեմբերի 23-ին հանրաքվեի արդյունքների հիման վրա ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն: 1991 թվականի օգոստոսին ԽՍՀՄ-ում կազմակերպված պուտչը արագացրեց երկրի անկումը, սակայն որևէ մեկը չէր կարող կանխագուշակել էրբ ԽՍՀՄ-ը կդադարի իր գոյությունը, այդ պատճառով ՀՀ ԳԽ նախագահությունը որոշեց ստեղծել «ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցով

բանակցությունների կոնցեպցիան մշակող և դրանց համակարգը նախապատրաստող հանձնախումբ» հետևյալ կազմով. Բ. Արարքյան, ՀՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալ, Է. Եգորյան, ՀՀ ԳԽ անխախ պետականության և ազգային քաղաքականության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, Դ. Վարդանյան, ՀՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, Բ. Ասատրյան, ՀՀ ԳԽ առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, Տ. Սարգսյան, ՀՀ ԳԽ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ [1, գ. 5, էջ 20]: Ի լրումն դրան կազմվեց նաև ԽՍՀՄ կազմից ՀՀ դուրս գալու կապակցությամբ բանակցությունների նախապատրաստման հանձնախումբ [1, գ. 5, էջ 22]: Հաստատվեց Ադրբեջանի հետ տարվող բանակցությունների հիմնական պատվիրակության կազմը: Հայաստանում ծավալվեց մեկ համակարգից մյուսին անցնելու բարդ գործընթաց, որն ընդգրկեց քաղաքական համակարգը, տնտեսակարգը, արժեքային համակարգը, առօրեականությունը, սոցիալական ինստիտուտները:

Անկախացող հանրապետությունը հաստատում էր առաջին ինքնուրույն միջազգային հարաբերությունները: Անցումային շրջանում վավերացվեց 148 միջազգային պայմանագիր [1, գ. 5, էջ 22]: ՀՀ ԳԽ առաջին 2 տարում մանրամասն հաշվետվություն էր ներկայացվում արտասահմանյան երկրներ գործուղումների, դրանց ծախսի և արդյունքների վերաբերյալ:

Քայլեր արվեցին ԳԽ-ն ոչ միայն որպես օրենսդիր, այլ նաև ներկայացուցչական մարմին զարգացնելու ուղղությամբ: ՀՀ ԳԽ նախագահության որոշում կայացվեց՝ «ՀՀ ԳԽ վարչական շենքի առջևի այգին քաղաքացիների հանգստի համար տրամադրելու մասին» [1, գ. 4, էջ 20], պատգամավորները այցելում էին իրենց ընտրատարածքներ, հանդիպում ընտրողների հետ և ԳԽ-ի նիստերում բարձրաձայնում նրանց հուզող հարցերը: Պատգամավոր Թ.Խ.Գոլյանի առաջարկությամբ ժողովրդական դեպուտատների հերթապահություն սահմանվեց քաղաքացիների ընդունելության համար:

Որպես ներկայացուցչական մարմին ՀՀ ԳԽ-ն քննարկում և արձագանքում էր գործադիր մարմինների կարևորագույն որոշումներին, որոնք կապված էին անկախացման գործընթացի հետ: Այսպես, ՀՀ ԳԽ նախագահությունը ընդունեց որոշում «ՀՀ Լուսավորության նախարարության կոլեգիայի 1991 թ. մարտի 15-ի որոշման մասին»<sup>3</sup>, որի համաձայն ռուսական

<sup>3</sup> Խոսքը գնում է ՀՀ լուսավորության նախարարության կոլեգիայի 1991 թ. մարտի 15-ի «Ազգային միասնական հանրակրթական դպրոցի մասին որոշման կատարման ընթացքը և հետագա խնդիրները» որոշման մասին:

հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանները պետք է անցնեն հայերեն ուսուցման, իսկ 5-րդ և բարձր դասարաններում պետք է ապահովվեր «հայերեն ուսուցմանը կամավոր անցնելու սկզբունքը, դրա կիրառման համար ստեղծելով նպաստավոր պայմաններ» [1, գ. 4, էջ 46]:

Տեղական ինքնակառավարման համակարգը ձևավորված չէր և ՀՀ ԳԽ-ն, ըստ էության, իր հսկողության տակ էր վերցրել տեղական խորհուրդների գործունեությունը: Այս փուլում, առանց գիտական հետազոտման և հիմնավորման, սկսվեց նախորդ շրջանում խոշորացված գյուղերի տարանջատում և դրանցում գյուղական խորհուրդների վերականգնում: ԳԽ-ն խառնվում էր ՀՀ պատգամավորների տեղական խորհուրդների պատգամավորների ընտրությունների գործընթացին, ոչ միայն դրա վերաբերյալ որոշումներ կայացնելով, այլ նաև տեղական խորհուրդներ դիտորդներ և լիազոր ներկայացուցիչներ գործուղելով: Սկսվեց նաև ՀՀ մի շարք շրջանների և բնակավայրերի վերանվանման (հայեցման) գործընթաց: 1991 թ. օգոստոսի 12-ին ՀՀ ԳԽ նախագահությունը ընդունեց «Հանրապետության շրջաններին Գերագույն խորհրդի պատգամավորների ամրացման մասին» [1, գ. 6, էջ 25] որոշումը, որով ՀՀ ԳԽ նախագահության և մշտական հանձնաժողովների առանձին անդամներ կցվեցին հանրապետության տարբեր քաղաքների ու շրջանների: Դա նշանակում էր լիազոր ներկայացուցիչների նոր ինստիտուտի ստեղծում, որը փաստացի իր վրա էին վերցնելու Կոմունիստական կուսակցության վերահսկման և ուղղորդման նախկին գործառույթը: Այն պետք է հետևեր ՀՀ ԳԽ կողմից ընդունված օրենքների ու որոշումների կենսագործմանը տեղերում: Մակայն նորաստեղծ ինստիտուտը չկայացավ և ՀՀ ԳԽ-ի նիստերից մեկում պատգամավոր Գ. Հովհաննիսյանը<sup>4</sup> պատկերավոր նշեց. «Նախագահի հավաստիացումները, թե նախագահական համակարգը փոխարինելու է կոմկուսին և դառնալու է խորհուրդները աշխատացնող շաղախը, փաստորեն, հակառակ արդյունք տվեց, այդ գաղափարը չափազանց ջրիկ դուրս եկավ՝ կազմալուծելով պետական կառավարման և ենթակառավարման հիմքերը» [1, գ. 258, էջ 116]: Տեղերից ԳԽ էին գալիս մեծ թվով բողոքներ տեղական ընտրություններում խախտումների վերաբերյալ: Հանձնաժողովի անդամները հաճախ էին գնում շրջաններ, հանդիպում տարբեր գյուղերի և քաղաքների բնակիչների հետ:

Այսպիսով՝ 1990-1991 թթ. ՀՀ Գերագույն խորհուրդը իրականացնում էր օրենսդրական, ներկայացուցչական, վերահսկողական, գաղափարախոսական կարևոր գործառույթներ և հանդիսանում այն ֆորմալ հարթակը, որտեղ նախագծվում էր անկախացող հանրապետության հետագա ուղին:

#### Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Ֆոնդ 207, Ցուցակ 62:
2. **Տեր-Պետրոսյան Լևոն**, Ընտրանի: - Երևան, 2006:
3. <http://www.parliament.am/parliament.php?id=parliament>
4. <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=ESU;n=6#0RfR9pSbdd4VVDKHB>

*Տժանա/Հանձնվել է՝ 12.11.2021  
Рецензирована/Գրախոսվել է՝ 19.11.2021  
Принята/Ընդունվել է՝ 26.11.2021*

<sup>4</sup> Գագիկ Հովհաննիսյանը ՀՀ ԳԽ աղետի գոտու և քոնագաղթյալների հարցերի մշտական հանձնաժողովի անդամ էր, ՀՅԴ խմբակցության անդամ: